ները, գիւտերը, հանքագործութիւնը, անտառների մշակութիւնը եւն.։ Իր ժամանակի մերկանտիլ վարդապետութեան հետեւելով, երկրի հարստութիւնը նա համարում է ոսկին, արծաթը եւ բոլոր ազնիւ մետաղներն ու ակները։ Ուստի խրախուսում է այդ ամենի ներմուծումը, ազատելով մաքսից, եւ ընդհակառակը, արգելում է արտահանութիւնը, ծանր մաքսերի եւ հարկերի ենթարկելով։

Նոյն այդ նպատակով՝ բոլոր յայտնաբերուած հանքերը — բացի աղից, որ պետութեան սեպհականութիւնն է — համարւում են յայտնաբերողի սեպհականութիւնը, որը սակայն պետութեանը տալիս է միայն տասանորդ (ՃԲ, ՃԽԲ)։

Այդ ամենին զուգընթաց՝ նա աշխատում է համապատասխան օրէնքներով կանոնաւորել հասարակական յարաբերութիւնները։ Ամենից առաջ՝ խստօրէն վերացնում է գերեվաճառութիւնը Հայաստանում, մարդուն համարելով բնութեամբ ազատ եւ իրաւ հաւասար (ՃԻԱ)։ Այնուհետեւ փորձում է ճշդորոշել մարդկային բոլոր յարաբերութիւնները — ինչպէս են՝ հօր եւ զաւակների յարաբերութիւնները (ՃԾԸ), ծառայի եւ տիրոջ, աղախնի եւ տիրուհու յարաբերութիւնը (ՃԻԴ, ՃԻԵ, ՃԻԶ) եւն.։ Չի մոռանում անգամ որոշել ամուսնութեան տարիները — աղջիկների համար 14, իսկ տղաների՝ 17 (ՃՂԲ). որ հարեւանը հարեւանին տեղ պիտի տայ կտուրների ձիւնը եւ տան ջուրը թափելու (ՄԴ). որ աղտեղութիւնները չպիտի փողոց թափել, այլ թաղել «ի սիրտ երկրի» (ՄԴԵ)։

Դեռ աւելի. չի մոռանում կարգադրել, որ առանց հրաւէրի ոչ ոք իրաւունք չունի մէկի մօտ գնալու՝ հարսանիք կամ երեխայի ծնունդ շնորհաւորելու (ՅԻԶ). որ մեռելատուն գնալը նոյնպէս պիտի լինի յատուկ հրաւէրով (ՅԻԷ). որ եկեղեցում ով ո՞րտեղ պիտի կանգնի (ՅԾԲ, ՅԿԱ). որ խնջոյքի ժամանակ ով ո՞րտեղ պիտի նստի (ՅԻԳ, ՅԻԴ). որ թաղման համար եկեղեցական պաշտօնեաներից ով ո՞րքան պիտի ստանայ (ՅԻԷ)։ Բերում է նոյնիսկ ձեւը, թէ ի՞նչպէս պիտի գրել շնորհաւորանքի հրաւէրները, թղթի ո՞ր երեսի վրայ, եւն., եւն. (ՅԻԶ)։

Մասնաւորապէս կանանց վիճակը շատ է հետաքրքրում Շահամիրեանին։ Արեւելցու դաժան վերաբերմունքը դէպի կինը մենք բաւական մեղմացած ենք տեսնում նրա մօտ։ Նրա համար կինը այլեւս այն իրաւազուրկ արարածը չէ, արհամարհուած եւ ամբողջովին տղամարդու կամքից կախուած, ինչ որ մահմեդական արեւելքում, թէեւ արեւելքի ազդեցութիւնը դեռ եւս շատ զօրեղ է նրա վրայ։

Կնոջ հարեմական վիճակը դեռ շարունակւում է նրա մօտ. օրինակ, ոչ մի տղամարդ իրաւունք չունի կնոջ սենեակը մտնելու։ Բայց պետական պաշտօնեաները մտնել կարող են, միմիայն մի դէպքում, երբ նրանք հետապնդում են քրէական յանցաւորին կամ մահապարտին ձերբակալելու։ Թէեւ հեղինակը դա պատճառաբանում է նրանով, որ նա չի ցանկանում, որ «մեր մայրերի կամ ապագայ մայրերի սենեակում աղմուկ, դղրդում եւ տարակուսութիւն լինի» (ՅԻԱ), սակայն բուն շարժառիթը շատ պարզ է։ Կամ՝ մի յատուկ օրէնքով (ՃԱԶ) նա կանանց արգելում է մենակ մտնել մի տուն, ուր կին չկայ, ուր միայն տղամարդ է ապրում, բացի վերջնիս մօրից եւ քրոջից։ Բայց դրա հետ միասին՝ նա թոյլատրում է կանանց եւ աղջիկներին առանց քօղի, «բաց երեսով եւ բաց գլխով ազատապէս շրջել, բացի Տիրոջ Տնից» (ՃԱԲ)։

Դէպի կինը եղած համեմատաբար մեղմ վերաբերմունքը մէկից աւելի փաստեր ունի Շահամիրեանի օրէնքների մէջ։ Այսպէս կնոջ — հեթանոս թէ քրիստոնեայ — գերի վերցնել չի կարելի (ՃՂ, ՅԻԴ)։ Անգամ պատերազմի ժամանակ մենք շատ քաղցր պիտի վարուենք թշնամու կանանց հետ, որպէսզի այդպիսով «թշնամիները սիրեն մեզ եւ հնազանդին հաւատարմութեամբ» (ՅԺԲ)։ Տղամարդը միշտ ուշադիր պիտի լինի դէպի կինը եւ քաղաքավարութեամբ նրան վերաբերուի (ՅԻԴ)։ Ոչ ոք իրաւունք չունի կնոջ ծեծելու — բացի դատարանից եւ ամուսնուց — եթէ ամուսնացած է նա, այն էլ զգուշութեամբ եւ միայն «փափուկ տեղին», խփելով մինչեւ «12 դամչի», որպէսզի «չվիրաւորուի նա եւ կամ չխորտակուին նրա ոսկորները» (ՅԱԱ)։

Նոյնը նաեւ աշակերտուհու նկատմամբ։